Ամփոփ նյութ

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ կիրառվել են պատասխանատվության միջոցներ ապահովագրական գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար:

Ստորև ներկայացված է որոշման վերնագիրը և եզրափակիչ մասը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ ՈՐՈՇՈՒՄ 27.02.2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1/05 ԱԳ-Ա

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սույն որոշման նկարագրական մասում նկարագրված խախտումները թույլ տալու համար Ընկերության նկատմամբ կիրառել **տուգանք՝ 2.500.000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, ինչպես նաև նախազգուշացում՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում խախտումները վերացնելու և հետագայում նման խախտումները բացառելու, ինչպես նաև Ընկերության գործադիր տնօրենի կողմից խախտումների վերացումն ապահովելու և այդ առնչությամբ ձեռնարկված միջոցառումների մասին 10-օրյա ժամկետում Կենտրոնական բանկ տեղեկություններ ներկայացնելու հանձնարարականներով:**
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերություն մուտքագրվելու կամ Ընկերության լիազորված անձին սահմանված կարգով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է երկամսյա ժամկետում բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ